ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

29. օգոստոսի 2024
արձ. թիվ 13

Վավերացնում եմ
ՀԱԱՀ ռեկտորի պարտականությունները կատարող

Հ. Զաքոյան
29.08 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՏԱՆԸ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2024-2029

ԵՐԵՎԱՆ 2024

Հայեցակարգ՝ «Միջազգայնացում բոլորի համար, անձնականից մինչև ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում»

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (ՀԱԱՀ), հանդիսանալով ագրոպարենային համակարգի մասնագետների պատրաստման և ոլորտի մասնագետների վերապատրաստման միակ բարձրագույն կրթության կենտրոնը հանրապետությունում, հիմք ընդունելով.

- ՀԱԱՀ առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը,
- Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը,
- ՀՀ կրթական համակարգում նախատեսվող փոփոխությունները,
- միջազգային կրթական համակարգի զարգացման տենդենցներն ու ուղղությունները,
- միջազգային դրամաշնորհային կառույցների կողմից ներկայացվող առաջնահերթությունները,

միջազգային կրթական և հետազոտական բաղադրիչների խթանման, զարգացման և կայունության ապահովման համար ՀԱԱՀ-ն որդեգրում է «միջազգայանցումը տանը» (ՄՏ) քաղաքականությունը և նպատակ դնում այն զարգացնել Համալսարանում:

Նախադրյալներ և պատճառներ

Եվրոպական կրթական տարածքում դեռ երկու տասնամյակից ավել կիրառվում է «միջազգայանցում տանը» հայեցակարգն ու այդ ընթացքում եվրոպական տարբեր համալսարաններ սկսել են կիրառել այդ բաղադրիչն իրենց համալսարանների միջազգայնացման համատեքստում, սակայն այն դեռևս զարգացած չէ ՀԱԱՀ-ում՝ չնայած առկա տարբեր միջազգային նախագծերին և բազմաթիվ շարժունության գործընթացներին: Այս բաղադրիչի ապահովման համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ. կրթության որակ, միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրեր, միջազգային շարժունության, օտար լեզվի իմացության համապատասխան մակարդակ, կրթական և հետազոտական ստորաբաժանումների հետևողականություն՝ միջազգային փոխանակումների մասնակցած անձանց կողմից ձեռքբերված միջազգային փորձի տարածման և ներդրման առումով:

ՄՏ-ն բնութագրվում է որպես *«...միջազգային և միջմշակութային ուղղությունների/բաղադրիչների նպատակային ներառում տվյալ համալսարանական միջավայրում սովորող ուսանողների ֆորմալ և ոչ ֆորմալ*

կրթական ծրագրերում...» ("...the purposeful integration of international and intercultural dimensions into the formal and informal curriculum for all students within domestic learning environments", Beelen & Jones, 2015):

ՄՏ-ի իրականացման կարևոր նախադրյալներն ու քայլերն են՝

1. Կրթական ծրագրերում գլոբալ հեռանկարների ներառում բոլոր ուսանողների համար, անկախ նրանից՝ սովորում են արտերկրում, թե միայն հարազատ բուհում:
2. Կիրառել համապարփակ մոդել, որի շնորհիվ բոլոր ուսանողները կկարողանան առավելագույնս ներգրավվել գլոբալ, միջազգային և միջմշակութային ուսուցման գործընթացում:
3. Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագերում ներառել միջազգային և միջմշակութային կարողությունների զարգացման բաղադրիչներ և վերջնարդյունքներ:
4. ՄՏ-ն սովորողակենտրոն է և նպատակաուղղված է կրթական միջավայրում մշակութային բազմազանության և ներառական կրթության զարգացմանը:
5. ՄՏ-ն ներգրավում է ոչ միայն միջազգային փորձ ունեցող ուսանողներին և աշխատակցիներին, այլև բոլոր ներքին շահակիցներին, քանի որ նպատակը միջազգային փորձի ներդրումն է համալսարանական միջավայրում:
6. ՄՏ-ի բաղադրիչների կիրառումը կարող է իրականացվել մայրենի լեզվով, դրանով ապահովելով օտար լեզու չիմացողների «միջազգայնացմանը տանը»:
7. ՄՏ-ն խթանում է վիրտուալ/առցանց հաղորդակցությունը և գործունեությունը տարբեր կրթական հաստատությունների միջև:
8. Հաշվի առնելով, որ գլոբալ ուսուցումը նաև ենթադրում է երկխոսություն և նպաստում է տարբերությունների, անհավասարությունների ըմբռնմանը, համալսարանում բացել ինտեգրմանն ուղղված տարածքներ բոլոր ուսանողների համար:
9. Նախագծել «ընկեր» ("buddy") կամ «բարեկամ» ծրագրերը, որոնք օգնում են արտասահմանյան ուսանողներին հարմարավետ զգալ տարբեր ազգերի ուսանողների միջավայրում: Համաշխարհային և ներառական ուսուցման համայնքի զարգացման համար կարևոր է գիտակցել, որ օտարազգի ուսանողին անհրաժեշտ է հարմարավետ զգալ ինչպես իր, այնպես էլ օտար ազգերի ներկայացուցիչների հետ:
10. Միջազգային բուհերում սովորած ուսանողներին կամ վերապատրաստված անձնակազմին հանձնարարել ուսումնասիրել տվյալ երկրի մշակույթը և սովորությունները և կիրառել դրանք ՀԱԱՀ-ում՝ օտարազգի գործընկերներ կամ ուսանողներ ընդունելիս:

11. Ուսանողների կարիքները հոգալու համար թարգմանել ցուցանակները, տեղեկատվական թերթիկները, ձեռնարկները մի քանի օտար լեզուներով և ընդունել աշխատանքի օտար լեզուների իմացությամբ անձնակազմի, ովքեր կտրամադրեն ծառայություններ, ինչպիսիք են՝ ակադեմիական խորհրդատվությունը, կրկնուսուցումը, առողջապահական հարցերը և այլն:

Միջազգայնացումը տանը ռազմավարությունն իրականացնելու համար համալսարանի հիմնական նպատակներն են՝

1. Զինել բոլոր ուսանողներին գլոբալ կարողություններով և հմտություններով՝ անհրաժեշտ այսօրվա փոխկապակցված և բազմազան հասարակությանը:
2. Վերակազմակերպել ուսուցման գործընթացն այնպես, որ այն միտումնավոր խթանի միջմշակութային, միջազգային և գլոբալ ուսուցումը:
3. Կարևորել ուսումնական և արտալսարանային միջոցառումների փոխկապակցվածությունը՝ ապահովելով միջմշակութային, միջազգային և գլոբալ ուսուցման հնարավորությունների ներթափանցումը Համլասարանի մշակույթի և կառուցվածքի մեջ:
4. Օգնել ուսանողին հարմարավետ զգալ օտարազգի ուսանողների հետ:
5. Դիտարկել գլոբալ ուսուցման կարևորությունը, ինչպես դասախոսների և վարչական անձնակազմի, այնպես էլ ուսանողների համար, տարածել գլոբալ ուսուցման հայեցակարգը լսարաններից դուրս, ստեղծել գլոբալ ուսուցման համայնքներ և կապել ուսանողների միջազգային և տեղական միջմշակութային փորձը (ուսումնառություն արտերկրում, միջազգային ծառայությունների ուսուցում, պրակտիկա և դաշտային/կլինիկական փորձառություններ) լսարանային ուսուցման հետ:

Միջազգայնացումը տանը ռազմավարությունն իրականացնելու համար համալսարանի հիմնական խնդիրներն են՝

1. Գիտակցել ներգնա միջազգային ուսանողների՝ ակադեմիական գրագիտության, պրակտիկայի, հմտությունների բացակայության և մշակույթին անծանոթ լինելու փաստը, որը խոչընդոտ է համալսարանում նոր ընկերներ, ակադեմիական և սոցիալական հմտություններ ձեռք բերելու հարցում:

2. Հաշվի առնել, որ թեև ներգնա միջազգային ուսանողները գիտակցում են միջմշակութային ինտեգրման առավելությունները, գործնականում նրանք սովորաբար խուսափում են դրանցից:

   Ընդունել, որ միջազգային փորձ ունեցող ոչ բոլոր աշխատակիցներն ու ուսանողներն են պատրաստ սեփական փորձով կիսվել իրենց գործընկերների և այլ ուսանողների հետ, դրանով էապես խոչընդոտելով ինստիտուցիոնալ զարգացմանն ու միջազգայանցմանը:

Միջազգայնացումը տանը ռազմավարության առաջադրված խնդիրները լուծելով՝ համալսարանը՝

1. Արդյունավետ կերպով վերասահմանում է համալսարանը որպես միջավայր, որը նախագծված է միջմշակութային, միջազգային և գլոբալ ուսուցումը խթանելու համար:
2. Ուսումնական ծրագրերի միջազգայնացման միջոցով խրախուսում է մտածելակերպի և գործելաոճի նոր ձևեր, որոնք ուսանողներին տալիս են հմտություններ, գիտելիքներ և փորձ՝ գլոբալ նշանակության հարցերը հասկանալու և լուծելու համար:
3. Սահմանում է միջազգայնացումը կրթության համատեքստում՝ որպես ուսումնական պլանի փոփոխության մի մաս:
4. Միաձուլում է մասնագիտական նպատակներն ու վերլուծության միջոցները գլոբալ հեռանկարների, հմտությունների և գիտելիքների հետ:
5. Ներառում է միջմշակութային ուսուցման տարրեր, որոնք բոլոր ուսանողներին հնարավորություն են տալիս հաջողությամբ ինտեգրվել այլ մշակույթներին: